5691

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«19» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 139 - 25

Նախաձեռնող՝ ***«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ***
Լոռու մարզ, Մեծավան Ա. Խաչատրյան փ. 15

Գործունեությունը՝ ***Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փ. N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցում***
Լոռու մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 139 - 25

« 19 » Դեկտեմբեր 2025թ.

Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փողոց N 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԲՈՌՈՅԱՆ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Տաշիր համայնք, Մեծավան բնակավայր

Ներածական մաս. Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փողոց № 1 պարիսպ հասցեում նախագծով նախատեսվում է կառուցել 1-ին և 2-րդ ծածկարանները: Հեռավորությունը Մեծավան բնակավայրից կազմում է 1750 մ:

Սեփականության իրավունքով պատվիրատուին պատկանող 15.5373 հա մակերեսով, (կադաստրային ծածկագիր 06-074-0251-0124) տարածքը գտնվում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, գործառնական նշանակության գոտում:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս Աշխատանքային նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել Տաշիր համայնքի ղեկավարի կողմից 2024 թվականի հունիսի 25-ին տրված N 28 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Տարածքում արդեն իսկ կառուցված են 2 ծածկարան, որոնց մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ 667.2 քմ և 515.94: Տարածքը գրավված է:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Նախատեսվող գործունեության նպատակն է կառուցել ևս 2 ծածկարան:

Ծածկարան №1 կառույցն իրենց ներկայացնում է տարածական, առանց շրջանակի, կամարակապ ցանկապատ, 1,1 մմ հաստության պրոֆիլով, 126,6x19,9 մ արտաքին չափերով կառույց, որի հիմքերն իրականացվելու են խամքարեբետոնից, պատերը բետոնե՝ 1 մ բարձրության, կրող միջնասյուներով և սեյսմիկ գոտիով: Հատակը նախատեսված է 15 սմ բետոնյա:

Ծածկարան №2 կառույցն իրենց ներկայացնում է տարածական, առանց շրջանակի, կամարակապ ցանկապատ՝ 1,1 մմ հաստության պրոֆիլով, 140,3x16,5 մ արտաքին չափերով կառույց, որը տեղադրվելու է գոյություն ունեցող ծածկերի արանքում, որոնց միջև հեռավորությունը կկազմի 16,5 մ: Հատակը նախատեսված է 15 սմ բետոնյա:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառերի և թփերի օգտագործմամբ:

Կառույցի էլեկտրամատակարարումը նախատեսված է Մեծավան 35/10 ԿՎ ենթակայանի ԿՌՍ-ՄԵԾԱՎԱՆ 10կվ ՕԳ-ի թիվ 41 խարսխային հենարանից՝ համաձայն 06,05,2022թ տրված ՏՊ 410/1-6 (10)/0187 տեխնիկական պայմանների:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսված է շինարարական արտադրական ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնն առաքվելու են Տաշիր քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարական նյութերից նախատեսված է օգտագործել թիթեղյա կոնստրուկցիաներ, բետոն, խիճ և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարության փուլում աշխատողների կոմունալկենցաղային պայմաններն ապահովելու համար: Նախատեսվում է շինհրապարակում տեղադրել բիոզուգարաններ:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ մոտ 1,44 տ ծավալով կենցաղային աղբը և 12 խմ ծավալով շինարարական աղբը (քանդման աշխատանքներ նախատեսված չեն):

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ մոտ 2 մ^3 ծավալով, օգտագործվելու է բարեկարգման նպատակով:

Աշխատանքների ավարտից հետո մաքրվելու են բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

Տարածքում նախատեսվում է տնկել տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ և թփեր:

Ըստ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության՝ գործունեության իրականացման տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցած տեսակներ չեն արձանագրվել, պատմության և մշակույթի, բնության անշարժ հուշարձանները բացակայում են:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- շինարարական նյութերի (ինչպիսիք են մետաղե կոնստրուկցիաները, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել աղմուկի առաջացման ժամանակ ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով,
- կենցաղային և շինարարական աղբը տեղափոխվելու է հատուկ հատկացված վայր, համայնքապետարանի հետ համաձայնեցված պայմանագրային հիմունքներով:
-փոշենստեցման նպատակով նախատեսվում է պարբերաբար իրականացնել տարածքի շինարարական հրապարակի ջրցան՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- իրականացվելու է շինարարական տեխնիկայի և ավտոմեքենաների շարժիչների կարգավորում, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը,
-շինարարական տեխնիկայի և ավտոտրանսպորտի բոլոր սպասարկման աշխատանքները, քսայուղերով և վառելիքով լիցքավորումն իրականացվելու է մասնագիտացված կայաններում, ինչը թույլ կտա բացառել վտանգավոր թափոնների առաջացումը:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
- մթնոլորտային օդարտանետումների պարբերական չափումներ՝ ամսական մեկ հաճախականությամբ,
-օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
-աղմուկի և թրթռումների մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարության ընթացքում նախատեսվում է հատկացնել 250 000 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրում ծածկարաների կառուցման վերաբերյալ իրականացվել է հանրային լսում Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրում, որի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, կադաստրի կոմիտեն, ինչպես նաև Լոռու մարզպետարանը և Տաշիրի համայնքապետարանը:

Փորձաքննական գործընթացում ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոնն ու նորմերը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Տաշիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Կառուցապատման աշխատանքների ժամանակ, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
5. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԲՈԶՈՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Տաշիր համայնքի Մեծավան բնակավայրի Դաշտամիջյան փողոց № 1 պարիսպ հասցեում նախատեսվող 1-ին և 2-րդ ծածկարանների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման

հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան